ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 08 >> փետրվարի 2016թ. N: 21-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ N 17 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ N 17 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1354-Ն որոշման 2-րդ և 4-րդ կետերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1 . Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու N 17 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Գյումրու ակադեմիական վարժարան>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման պայմանագիրը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու N 17 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, գույքային այլ իրավունքների, ինչպես նաև պարտատերերի և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ վիճարկվող) պարտավորությունների փոխանցման ակտը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանին և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանին:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկությունն ինձ ծանոթ է՝